Շահանդուխտ Տիգրանի Ալխասյանի սնանկության գործով անշարժ գույքի աճուրդ-վաճառքի մասին

2026-10-28 15:23:23

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

13.11.2026թ. ժամը 14:00-ին սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանի կողմից ք.Երևան, Արշակունյաց 5, 109 սենյակ հասցեում կանցկացվի Շահանդուխտ Տիգրանի Ալխասյանի ՍնԴ/3406/04/25 սնանկության գործով Գառնիկ Յուրիկի Ջանելյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդ-վաճառք, բաց դասական եղանակով, 1 լոտով՝
Լոտ 1- Բնակելի տուն՝ ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Նորագավիթի 12-րդ փողոց 3-րդ նրբանցք 3 տուն:
Սեփականության վկայականի համար՝ 22022021-01-0264: Անշարժ գույքի միավորը ըստ անշարժ գույքի վկայականի բաղկացած է՝ 1. Բնակելի տուն կադաստրային ծածկագիր 01-011-0491-0016-001 2. Հողամաս կադաստրային ծածկագիր 01-011-0491-0016:
Լոտի նկարագրությունը՝
Բնակելի տուն՝ 1 հարկանի, մակերեսը՝ 86,6 ք.մ: Կառուցման տարեթիվ՝ 1966թ.: Շենքի կառուցման նյութ՝ տուֆ, միջհարկային ծածկը՝ երկաթբետոն, տանիքի նյութը՝ թիթեղ: Միջհարկային բարձրությունը՝ 3.2 մ.: Մուտքի դուռ՝ փայտյա, պատուհաններ՝ փայտյա և մետաղապլաստ: Սենյակները՝ պատերը ներկված, հատակը տախտակ, առաստաղը ներկված, վիճակը անբավարար: Խոհանոցը՝ պատերը ներկված, հատակը տախտակ, առաստաղը ներկված, վիճակը անբավարար: Հողամասը սեփականություն, մակերեսը 0.070626 հա, նպատակային նշանակությունը բնակավայրերի, սեղանաձև:
ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Նորագավիթի 12-րդ փողոց 3-րդ նրբանցք 3 տան հասցեում առկա են նաև ինքնակամ կառույցներ (նկուղ՝ 33.5 ք.մ, բնակելի տուն՝ 106.3 ք.մ, ծածկ՝ 16.6 ք.մ, հանգստյան տաղավարի ծածկ՝ 4.9 ք.մ, կառուցված 2009թ.), որոնք ՉԵՆ հանդիսանում գրավի առարկա և ՆԵՐԱՌՎԱԾ ՉԵՆ վաճառքի ենթակա գույքի կազմում և մեկնարկային գնի մեջ: Ինքնակամ կառույցները չապամոնտաժելու, շինանյութերը չհեռացնելու կամ դրանց հնարավոր կորստի/վնասման բոլոր ռիսկերը մնում են գրավատու Գառնիկ Ջանելյանի վրա: Անշարժ գույքը գրավադրված է «Արդշինբանկ» ՓԲԸ-ում:

Լոտի մեկնարկային գինը կազմում է 45.600.000 ՀՀ դրամ:
Գույքի սեփականության փոխանցման, պետական գրանցման և հնարավոր վտարման հետ կապված ծախսերը կատարում է գնորդը:
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝
1) լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով նախավճարի վճարումը աճուրդի մասին հայտարարությունում նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը.
2) լոտի մեկնարկային գնի 1 տոկոսի, բայց ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով աճուրդի մասնակցության վճարի վճարումը աճուրդի մասին հայտարարությունում նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը.
3) լիազորագիր, եթե հայտատուն հանդես է գալիս լիազորված անձի միջոցով.
4) իրավաբանական անձ հայտատուների դեպքում՝ նաև պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և կանոնադրության, ինչպես նաև իրավաբանական անձի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենները.
5) անհատ ձեռնարկատեր հայտատուների դեպքում՝ նաև պետական հաշվառումը հավաստող փաստաթղթի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները.
6) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ հայտատուների դեպքում՝ նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը:
Աճուրդին կարող են ներկա գտնվել նաև աճուրդի մասնակից չհամարվող անձինք, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի (այսուհետ՝ նախարար) գրավոր հանձնարարությամբ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչները (այսուհետ՝ աճուրդի մասնակից չհամարվող անձ):
Աճուրդի մասնակից չհամարվող անձը աճուրդին ներկա գտնվելու համար կառավարչին է ներկայացնում իր անձը հաստատող փաստաթուղթը, իսկ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչը՝ աճուրդին ներկա գտնվելու վերաբերյալ հանձնարարականի բնօրինակը և իր անձը հաստատող փաստաթուղթը: Կառավարիչն իրավասու է սույն կետում նշված փաստաթղթերը չներկայացրած անձին չթույլատրել ներկա գտնվել աճուրդին:
Մասնակցության վճարը և նախավճարը վճարվում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում Շահանդուխտ Տիգրանի Ալխասյանի սնանկության հատուկ հաշվին՝ 16051033691217:
Աճուրդին մասնակցելու ցանկացողները մինչև 06.11.2026թ. ներառյալ կարող են աճուրդի մասնակցության հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան՝ ք.Երևան, Օտյան 53/2 հասցեով:
Աճուրդն սկսելուց առնվազն մեկ օր առաջ կառավարիչը ստուգում է հայտերի և դրանց կից փաստաթղթերի՝ սույն կարգին համապատասխանությունը: Սույն

կարգին համապատասխան հայտ ներկայացրած հայտատուները համարվում են աճուրդին մասնակցելու իրավունք ստացած: Կառավարիչն աճուրդն սկսելուց առնվազն մեկ օր առաջ էլեկտրոնային եղանակով ծանուցում է հայտատուներին աճուրդին մասնակցության նրանց կարգավիճակի վերաբերյալ՝ եթե հայտում նշվել է էլեկտրոնային փոստի հասցե:
Աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Լոտի վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:
Աճուրդի հաղթողի կողմից արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չստորագրվելու դեպքում այդ մասնակիցը զրկվում է այդ աճուրդին մասնակցելու իրավունքից, իսկ եթե տվյալ աճուրդին մասնակցում է մեկից ավելի հայտատու, ապա աճուրդը շարունակվում է գնային առաջարկների ներկայացման փուլից նույն մեկնարկային գնով՝ առանց արձանագրությունը չստորագրած անձի (հայտատուի) մասնակցության:
Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չստորագրվելու դեպքում մասնակցի վճարած մասնակցության վճարն ու նախավճարը հետ չեն վերադարձվում:
Աճուրդում հաղթող մասնակիցը պարտավորվում է աճուրդի արձանագրությունը ստորագրելուց հետո 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել գույքի արժեքը, նվազեցնելով վճարած աճուրդի նախավճարի չափը: Հաղթող մասնակցի կողմից աճուրդի արձանագրությունը չստորագրելու կամ 10 օրվա ընթացքում ամբողջությամբ գույքի արժեքը չվճարելու դեպքում որպես նախավճար մուծված գումարը չի վերադարձվում:
Եթե սույն կարգին համապատասխան հայտ ներկայացրած անձը աճուրդին չի մասնակցում կամ մասնակցում է, սակայն չի հաղթում, ապա նրա կողմից վճարված նախավճարը ենթակա է վերադարձման, իսկ աճուրդի մասնակցության վճարը վերադարձման ենթակա չէ:
Աճուրդի մասնակցության վճարը անկախ աճուրդի արդյունքներից հայտ ներկայացրած մասնակիցներին վերադարձման ենթակա չէ:
Աճուրդը անցկացվում է ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ 116-Ն հրամանով հաստատված կարգով:
Վաճառվող գույքի մասին մանրամասն տեղեկություններ ստանալու, ուսումնասիրության և աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանին 093 892279, 097 222922 հեռախոսահամարով:

37497222922

nemra77@mail.ru

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ Պ., 5, 417